
Փորագործիչ — դժագործիչ Զօհրաբեանը յետագայ շրջանում անում է մի նոր նախաձեռնություն : Պատրաստում է նաեւ արեւելեան դործիական երաժշտութեան պատկեր կազմող նախագիծերից մէկը : Դա քառն է, որի նուրբ լարերն ա՛յնքան հարադատութեամբ արտայայտում են արեւելքի հին-չիններէի բոլոր նրբութիւնները՝ իրենց դունազեղ երանգներով : Թառի արեւստը, անկասկած, նա չի կարողանում հասցնել այնպիսի բարձրութեան, ինչպէս Նոր — Զուղայեցի Եսայիայ խանը (Յովհաննէս Արգարեանը), որի պատրաստած ամէն մի թառն այժմ գնահատւում է 1000 — 1500 ռիալ, մի հանդամանք, որը բացառիկ երեսօթ է Իրանում եւ ինքնին ընտրուում է նրա քանդակած թառերի ղեկարկողական արժէքը : Նոյնպէս յիշատակենք Նոր Զուղայեցի թառի վարպետ փորագործիչներ՝ Մելիքի Դանիէլեանին, Համբարձում Արգարեանին եւ մանաւանդ Յակոբ Հայրապետեանին, որ Նոր — Զուղայում յայտնի է ո՛չ միայն որպէս Քառ պատրաստող նուրբ արեւստագէտ, այլեւ այսօր նա առանձին հմտութեամբ կերտում է նաեւ արեւելեան երաժշտական նախագիծերից քեանմանչէ, սազ, սանթուր, դափ, իսկ արեւմտեան կիթառ, որոնք իրենց արեւստի նրբութեամբ կարող են մրցիլ եւրոպական արտադրութիւնների հետ :

Արտադրութիւնների հետ :

Բարսեղ Զօհրաբեանի պատրաստած թառերը եւս օժտւած են երաժշտական տէխնիկայի էական տեսանկյունով եւ ունին ղեկարկողական որոշ դժեր : Մինչեւ այժմ նա պատրաստել է հարիւրից աւելի սաղա-Փանաշի թառեր, որոնք այսօր հնչում են Թէհրանի, Սպահանի, Շիրազի եւ Իրանի այլ կենտրոնական քաղաքների երաժշտական համերգներում ու հաւաքոյթներում :

Միանք են, ահա, փորագործիչ-դժագործիչ Զօհրաբեանի ստեղծագործութեան հիմնական յատկանիշերը : Նրա լաւագոյն քանդակներից շատերը, որոնք այսօր փորագրական արեւստի ղեկեցիկութիւններ են եւ իրենց նրբութեամբ գրաւում են ձեր ուշադրութիւնը, ո՛չ միայն ղեկարկողական արժէք են ներկայացնում, այլ եւ հայ նորագոյն փայտափորագրութեան ոճերի,

ուղղութեան, ձեւակերպումների եւ այլ կարեւոր հարցերի լուսարանութեան համար ղեկեցիկ նմուշներ են եւ, որ էականն է, այսօր ձեռք յատակ դադարաւոր են տալիս Նոր — Զուղայի փայտէ՛՛՛ ղեկարկողական քանդակների էութեան եւ նախաձեռնների մասին : Այդ տեսակէտից Զօհրաբեանը թանկագին ծառայութիւն է մատուցել հայ ղեկարկողական : Այս բնութիւնը յետոյ պարզ է մի հանդամանք, որ նա իր դարադանդակներով կարող է ուրոյն տեղ դրաւել փայտափորագրութեան մշակույթի մէջ, որ կազմում է հայ ղեկարկողական արտադրութեան մի կարեւոր էջը :

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Թեմիս

ԱՌ ՊԱԼԼԱՍ ԱԹԵՆԷ

Ա՛լ չկայ ձայն, ա՛լ չկայ երգ որ ստուերներէն դուրս քաշէ քեզ : Իր հինաւորաց իրիկունները մոռցած Ելլադան, քեզ լաւ եւս ուրանալու համար, Ակրոպոլէն հեռացաւ : Եթէ ձեռքերս անսուրբ են, ես ունիմ հողին քրմութիւն մը որ քու հողիդ վրայ Պառնասի ծաղիկներ կը թափթփի : Աւելի վեր քան սա քարերը քու լքուած պաշտամունքիդ, կը բարձրացնեմ իմ երիտասարդ պաշտամունքս, պայծառ ինչպէս ատուկեան ալիքներուն վրայ այլն Ապրիլի քու ոտքերուդ տակ կ'այրեմ, ինչպէս խունկ մը անխառն, իմ ցաւս՝ քեզի ծառայելու համար շատ ուշ ծնած ըլլալուս... :

... Կը լռէ իմ խորիմտ արիւնս եւ՝ անոր հետ՝ այն բարկ կեանքը որ կը թաւալի երակներուս մէջ հրաւառ : Ես կ'երթամ ինչպէս ստուեր մը՝ նշմարանքներու մէջէն, եւ ձայնը որուն ալիւնջ կը դնեմ, ձայնն է իմ երազներուս... : Ո՞րն է այն ստեղծագործ ձեռքը որ դուն չպիտի տատաճացնէիր. Փիղիտոս այն բնութեալն էր որ քու հողդ կազմեց : Ան քեզ անդուդական կամեցաւ, բայց ես քեզ կ'երազեմ հոյակապ քու անարատութեանդ չինական փարդերովը պսակուած անառի՛կ դիցուհի : Դարերու քերթութիւնն իր ջահն սպառեց, վերջին կարապը լռեց իր դերադոյն երգին

վրայ, բայց իւրաքանչիւր՝ ձեռք, առջեւէդ անցնելուն, ջահը նորէն կը վառէ, իւրաքանչիւր հողի քու պատերուդ մէջ ըստեւիք խօսքերը նորէն կը դառնան : Ես սիրով ու հպարտութեամբ լեցուն յետամնացն եմ, որ քու անունովդ՝ ինչպէս Կեփիսի աղբիւրներով՝ իր ծարաւը կ'անցընէ... :

... Ակրոպոլի ինքնակալուհի՛, ինչպէս հերոսական օրերուն՝ քեզ այս անունով պիտի հռչակէի : Կ'ուզեմ քեզ տեսնել Պարթենոնիդ մէջ կանդուն, քու մարտական ծակաւորիդ եւ հանդարտ ուժովդ : Աչքերուդ մէջ պիտի փնտռէի անհունութիւնը ծովերուն, ոտքերուդ տակ պիտի դառնէի քաղցրութիւնն առաւօտներու : Պիտի կաղձուկէր թափօրը Պանաթինեանց, քրմութիւններու խոստովութիւնը պատմութեան, համեմանքներու անուշահոտութիւններով, մամանքներու անուշահոտութիւններով, նուաճաւոր ու կալիւղ դառիթափներ,

1918

Պ. Յ. ՔԻՒՐՏԵԱՆԻ

« Բանասիրական Գիտութիւններ »

Պատասխանելով այն երկու ճշգրտմաններուն զոր ըրած էի առանց զինքը մեղադրելու(1), այլ « ի սէր դիտութեան եւ ճշմարտութեան », ինչպէս վերնադրած էր իմ քաղցրութիւնը, Պ. Յ. Քիւրտեան անհաւատալի անխոհեմութիւն մը դործած է, ստիպելով իր « բանասիրական դիտութեան » հետ պարզել նաեւ իր մտաւորական սլարկեղծութիւնը :

Խօսելով Զաքարիա Աղուլեցիի Օրադրութեան վրայ, որ 1938ին հրատարակուած է Երեւան, Պ. Յ. Քիւրտեան յառաջ բերած էր հետեւեալ հատուածը.

« Թ՛վին ՌճԺԴ (1665) Երուսաղէմայ Եղիազար ոմն վարդապետ դուս եկաւ, եկաւ Լատամպօլ, սուլթան Մահմադ թաղաւորէն ամբը հանեց, թէ էջմիածնայ թէ մե-

տարտամ ու յամբահալ երաժշտութիւն մը երդչախումբերու... :

... Փոշին մէջ քու քամահրուած պաշտամունքիդ, ո՛վ Պալլաս, դշխոյ դահլիճէն, հողիս կը վերակազմուի : Ան ինքզինքը կ'երազէ բաղմապատիկ, ինքզինքը կը կամենայ անսահման, որպէսյի իր սէրը, անդուդական, քեզի պատուանդան դարձնէ... : Քու աւերակիդ վրայ յաղթական, խորհրդանշան մը ցցուեցաւ : Քու ոտանիդ սիրտը, լուծէն աղատած, այլ եւս դաղջ նայուածք մը լոկ ունեցաւ քու քաղիններուդ համար : Ժամանակը քեզ նորէն մեղի դարձուց, անճառելի՛ կոյս, խեղանդամ բայց հոր, կապուած բայց ճառագայթարձակ, ու չկայ մէկը որ՝ անցած ատեն՝ Պարթենոնին սեմը համբուրէ եւ չղդայ, Աստուածուհի՛, քու սաղաւնիդ օղին մէջ... :

(Flore attique)

Թղթ. Ա. ՁՈՊԱՆԵԱՆ

ԻՍԿՈՒՆԻ ՄԻՆԱՍԵԱՆ

ուն, թէ նվիրակ, թէ սեվալուրիս չի դան Ալի-Օսմանայ երկիրն(2) :

Այս տողերուն իմաստը շատ յստակ է : Զ. Աղուլեցի կ'ըսէ. « 1665ին, Եղիազար անուն վարդապետ մը Պոլիս եկաւ եւ սուլթան Մեհմէտէն հրամանագիր մը առաւ, որուն համաձայն էջմիածնին ո՛չ միւսուն պիտի բերուէր եւ ո՛չ ալ սեւալուրիս (վարդապետ կամ եպիսկոպոս) իբրեւ նուիրակ պիտի կրնար դալ Ալի-Օսմանի երկիրը » :

Այս հատուածին առթիւ, Պ. Քիւրտեան ուրիշ դիտողութեան մը ետք, ըսած էր թէ տպագրիչ-հրատարակիչը(3) « ալիսյանի սխալ » մը թողած էր « չի դալ Ալի-Օսմանայ երկիրն », զոր պէտք էր ուղղել « չի դան ալ ի Օսմանայ երկիրն » (այսինքն « այլեւս չդան Օսմանի երկիրը ») :

Ըսած էի թէ Պ. Քիւրտեանի սրբադրութիւնը ճիշտ չէր բնաւ եւ Զ. Աղուլեցիի հրատարակիչը մասամբ միայն սխալած էր, եթէ կարելի է սխալ որակել ուղղադրութեան ընդհանրացած ձեւ մը : Այս վերջին նախադասութիւնը կ'ալիւնարկէր պարսկական եւ արաբական յատկացուցիչ-

(1) « Բագմավէպ », սեպտ. հոկտ. 1947 :

(2) « Բագմավէպ », նոյն-դեկտ. 1946 :

(3) Տպագրիչը ի՞նչ դործ ունի հոս :